

Պետրոս Դեմիրճյան

Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
Orcid. ID 0009-0003-6265-4421
pdemirchyan@mail.ru,
DOI: 10.54503/1829-0116-2023.2-60

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐՈՒՄ
(Շար.- սկիզբը՝ ԻԶ, 2023-1-ում)

Բանալի բառեր- Ե. Տեմիրճիպաշյան, Մ. Չերազ, Ն. Բյուզադատի, «Երկրագունտ», «Նոր դար», աշխարհաբար, գրաբար, բառարան, ազգային լեզու, կրթություն, դաստիարակություն:

XIX դարավերջին արևմտահայ գրական կյանքում բուռն ու ծավալուն բանավեճ էր ընթանում նաև հին ու նոր գրական լեզուների՝ գրաբարի և աշխարհաբարի, առաջնայնության և կենսունակության կարևոր խնդրի շուրջ: Եղիա Տեմիրճիպաշյանը հենց սկզբից կանգնեց աշխարհաբարի պաշտպանության դիրքերում: Հիմնվելով ազգային և օտար հեղինակությունների (Լիդրե, Արսեն Այտընյան և այլ) տեսակետների, ոչ թե հեղաշրջության, այլ բարեշրջության բնական օրինաչափությունների վրա, նա համոզված էր, որ գրաբարը՝ մեր հին ու դասական մատենագրության լեզուն, այլևս գրեթե անհասկանալի էր ժողովրդի մեծամասնության համար, իսկ «ժողովրդեան կենդանի բարբառն»՝ աշխարհաբարը, գնալով կկանոնավորվի, կգարգանա ու կճոխանա, կընդունվի ու կսիրվի ժողովրդի կողմից:

Բանավեճի ընթացքում Ե. Տեմիրճիպաշյանի գլխավոր փաստարկներից էր նաև այն, որ արդի լեզվի խնդիրն օրակարգային էր ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ իրականության մեջ, դրա օրինակները կային նաև եվրոպական ժողովուրդների լեզուների զարգացման պատմության մեջ (հիշատակում էր, օրինակ, «լատին լեզուին խալականի, սպանականի և գաղղիականի» փոխարկման իրողությունը միջին դարերում), ինչը, ըստ նրա, հաստատում էր իր և իր համախոհների տեսակետը՝ արդի աշխարհաբարի հաղթանակի անխուսափելիության վերաբերյալ:

Այդ ամենը, սակայն, չէր նշանակում դեմ գնալ դասական լեզվին ու արժեքներին: Ե. Տեմիրճիպաշյանը մշտապես հորդորում և կոչ էր անում ամենքին՝ սիրել ու սովորել իրենց մայրենի լեզուն՝ «հին ըլլայ կամ նոր...»:

Petros Demirchyan

Doctor of Philological Sciences
Institute of Literature after M. Abegian of NAS of RA
pdemirchyan@mail.ru

YEGHIA TEMIRCHIPASHYAN IN LITERARY DISCUSSION OF THE TIME
(Cont.- the start: in 26, 2023-1)

Keywords -Ye. Temirchypashyan, M. Cheraz, N. Byuzadatsi, “Earth”, “New century”, Ashkharhabar, Grabar, dictionary, national language, education, upbringing.

At the end of the 19th century, in the Western Armenian literary life, there was a stormy and extensive debate about the important issue of the primacy and vitality of the old and new literary languages/ Ashkharhabar and Grabar. Yeghia Temirchypashyan stood in the positions of the protection of Ashkharhabar from the very beginning.

Based on the views of national and foreign authorities (Lidre, Arsen Aytinyan, etc.), not on the coup, but on the natural patterns of philanthropy, he was convinced that Grabar, the language of our ancient and classical bibliography, was almost incomprehensible to the majority of the people, and Ashkharabar, “the living dialect of the people,” would gradually be streamlined, will develop and prosper, will be accepted and loved by the people.

During the debate Ye. Temirchipsashyan's main arguments were that the problem of the modern language was on the agenda not only in the Western Armenian, but also in the Eastern Armenian reality, there were examples of this in the history of the development of the languages of the European peoples in the Middle Ages. For example, he mentioned, “the conversion of the Latin language to Italian, Spanish and Gallic”, which, according to him, confirmed his and his associates' point of view about the inevitability of the triumph of modern secularism.

All that, however, did not mean going against classical language and values. Ye. Temirchipsashyan always urged and called on everyone to love and learn their mother tongue, “old or new”.

Петрос Демирчян

Доктор филологических наук

Институт литературы имени М. Абегайна НАН РА

pdemirchyan@mail.ru

**ЕГИЯ ТЕМИРЧИПАШАН В ЛИТЕРАТУРНЫХ ДИСКУССИЯХ
СВОЕГО ВРЕМЕНИ
(Продолж. – начало в 26, 2023-1)**

Ключевые слова - Е. Темирчипашян, М. Чераз, Н. Бюзандаци, «Еркрагунт», «Нор дар», ашхарабар, грабар, словарь, национальный язык, образование, воспитание.

В конце XIX века в литературной жизни Западной Армении шла бурная и обширная дискуссия по важному вопросу о главенстве и жизненности старых и новых литературных языков - грабара и ашхарабара. Егия Темирчипашян с самого начала стоял на позициях защиты ашхарабара.

Основываясь на мнениях отечественных и зарубежных знаменитостей (Лидре, Арсен Айтнян и др.), он был убежден, что грабар, язык нашей древней и классической библиографии, был почти непонятен большинству народа, а ашхарабар – «живой диалект народа», постепенно упорядочится, будет развиваться и процветать, будет принят и любим народом. люди.

В ходе дискуссии одним из главных аргументов Э.Темирчипашяна было то, что проблема современного языка стояла на повестке дня не только в западноармянской, но и в восточноармянской действительности, примеры этого были также в истории развития языков европейских народов (он упомянул, например, о реальности преобразования «латинского языка в итальянский, испанский и галлийский») в средние века, что, по его мнению, подтвердило его точку зрения и его сторонников на неизбежность победы современного ашхарабара.

Однако все это не означало идти против классического языка и ценностей. Э. Темирчипашян постоянно призывал всех любить и изучать родной язык - «старый или новый».

Ներածություն

XIX դարավերջին արևմտահայ գրական կյանքում բուռն ու ծավալուն բանավեճ էր ընթանում նաև հին ու նոր գրական լեզուների՝ գրաբարի և աշխարհաբարի առաջնայնության և կենսունակության կարևոր խնդրի

շուրջ: Եղիա Տեմիրճիպաշյանը հենց սկզբից կանգնեց աշխարհաբարի պաշտպանության դիրքերում: Նա համոզված էր, որ այլևս «ոչ եւս է գրաբարն»՝ ժողովրդի մեծամասնության համար գրեթե անհասկանալի հին ու դասական մատենագրության լեզուն, իսկ «ժողովրդեան կենդանի բարբառն»՝ աշխարհաբարը, գնալով կկանոնավորվի, կզարգանա ու կճոխանա, կընդունվի ու կսիրվի ժողովրդի կողմից:

1880 թվականին Եղիա Տեմիրճիպաշյանը, Մշակ ստորագրությամբ, հրատարակում է «Հատընտիր ընթերցուածք» հատորիկը՝ ձեռնված իր հորերեբայրներից «մեծանձն Յարութին էֆէնտի Տեմիրճիպաշեան»-ին՝ «Երախտագիտութիւն եւ սէր յաւիտեան» մակագրմամբ: Գրքույկի՝ Գր. Օտյանից բերված բնաբանն արդեն պարզում է նրա ասելիքի բուն էությունը. «Աշխատեցէք, ո՛վ դուք, լուսալի՛ց երիտասարդներ, որ թերեւս լաւագոյն օրերու՝ պիտի տեսնէք նշոյլն հեռուանց՝ մեր հայրենեաց, տարածեցէք հայ լեզուն ընկերութեան ամեն խաւերուն մէջ, ամեն գաւառ ու հիւղակ, զի *որ մայրենի լեզուն կը խօսի հայրենի երկիրն ունի շրթանցը վրայ*»:

«Աշխարհաբարն աշխարհ կը պարունակէ»

Հիշյալ հատորի «Նախաբան»-ում Ե. Տեմիրճիպաշյանը, այլ հարցերի թվում, բավական հանգամանորեն անդրադառնում է նաև աշխարհաբար լեզվի «յառաջադիմութիւններ»-ին, կամ այլ բառով «աշխարհակալութիւններ»-ին՝ բացատրելով, թե, ըստ էության, «աշխարհաբարն *աշխարհ կը պարունակէ*, պիտ'ըսէի աշխարհ կը բովանդակէ»: Հղում անելով «իմաստասէր լեզուաբան»-ների տեսությանը՝ ժամանակների մեջ լեզուների «յամբ այլ յարածամ» աճելու, զարգանալու և, ի վերջո, «ոստանիկ լեզուին» փոխարինելու վերաբերյալ, նա, առարկություն չընդունող տոնով, գրում է, թե «Հայ լեզո՛ւն միայն պիտի խոտորէր ընդհանուր օրէնքէն»: Ահա թե ինչու, նա համոզված է, որ այլևս «ոչ եւս է գրաբարն»՝ մեր հին ու դասական մատենագրության լեզուն, իսկ «ժողովրդեան կենդանի բարբառն, որ նորա մտաւոր զարգացման հետ օր ըստ օրէ կանոնաւորութիւն, եւ ազնուութիւն, եւ ճոխութիւն կը ստանայ», փոխադարձաբար ներգործում է «մտաց եւ սրտից վրայ»: Վերջապէս՝ «Գրաբարեան եւ գրաբարագէտ համանիշ բառեր էին երբեմն, - հայտարարում է Եղիան, - այսօր մեծամասամբ հրաժարած են գրաբարեանք հին գրոց բարբառն յարուցանելու երազէն»: Ըստ նրա՝ դրան մեծապէս նպաստել է նաև «Հ. Արսէն Այտընեանի անվիճելի հեղինակութիւնն, որ մեռեալ լեզու հոչակեց գրաբարն իր *Քննական քերականութիւն*ին մէջ», որը նա «արդարեւ անմահ հ գործ» է համարում¹: Հետագա տողերում Ե. Տեմիրճիպաշյանը «ժողովրդական

¹ Ավելի ուշ «Գրական եւ իմաստասիրական շարժում»-ի (ԳԻՇ) էջերում Ե. Տեմիրճի-

բարբառին գահակալութիւնն հաստատելու» գործում բարձր է գնահատում նաև «Օտեան, Ոսկանեան եւ Ռուսինեանէ յետոյ», Մինաս Չերազի, Մատթեոս Մամուրյանի ջանքերը, «Մասիս»-ի ու «Բազմավէպ»-ի ներդրումը՝ «աղքատիկ եւ կանոնագուրկ աշխարհաբարն զգալի կերպով կանոնաւոր եւ ճոխ» հանդիսացնելու մէջ («Մշակ», 1880, էջ Դ-Ե): Ի վերջո, ըստ նրա, ճշմարտությունը, իրողությունն այն է, որ «Աշխարհ յառաջ կ'ընթանայ. աշխարհաբարն յառաջ կ'ընթանայ. գրաբարեանք կամայ թէ ակամայ կը մշակեն աշխարհիկ լեզուն, այդ լեզուով խօսելով եւ գրելով – նոր լեզուով հայեցելով նոր լեզուին դէմ, նոր լեզուով ներբողելով հին լեզուն. – վարժարանաց մէջ ուսանողք առ հասարակ գրաբար կը թարգմանեն, այլ աշխարհաբար կը շարագրեն»: Եվ ապա՝ տպագրվում են աշխարհաբար գրքեր ու դասագրքեր, թերթեր ու հանդեսներ, արդեն գրաբար հատընտիրներից ավելի սկսել է գործածվել «Պ. Պիպեռեանի ճաշակ արդի մատենագրութիւնն»... Իր այս սկզբունքներով Եղիան, ըստ էության արձագանքում էր «Ազգային դաստիա-րակութիւնի աննման հեղինակի», հայոց լեզվի «մեծանուն նորոգչի» և իր «մեծանուն բարեկամի» Մինաս Չերազի, գաղափարներին, որը դեռևս 1875 թ. դեկտեմբերին վաղամեռիկ Հակոբ Պալյանի առիթով Հարություն Սվաճյանին ուղղած նամակում գրում էր, որ նրա հա-մոզմունքն էր, թե «յառաջադիմութիւնն մի ճակատագիր է»: Ահա թե ինչու, «ջերմ գրաբարեան եղած էր, ջերմ աշխարհաբարեան եղաւ. հրաժարեցաւ մահէն եւ կեանքին փարեցաւ»: Նաև հիշեցնում էր Վ. Հյուգոյի նշանավոր խոսքը՝ «Մի մեռած լեզու գործածիլն, իւր մտածում գերեզմանի դատապարտելն է» (Տեմիրճիպաշեան Ե., 1920, էջ 6): Այն Մ. Չերազի, որ Նահապետ Ռուսինյանի տապանի առջև, խոսք ուղղելով «ազգային ժողովներու Նեստոր»-ին, հայտա-բարում էր «Գրական ասպարէզին մէջ, դու մին ես այն կորովի հեղինակներէն որք քաջացան դրօշ պարզել անցեալին դէմ, ժողովրդային լեզուի վեհապետութիւնն հռչակելով. ընտրողական դպրոցի նահապետն ես դու. որպէս ամեն բարեկարգիչ հալածանք կրեցիր, դու, երկաթէ աշխարհաբարեան...» (նույն տեղում, էջ 9):

Աշխարհաբարի իրավունքների պաշտպանությանն ուղղված պայքարը Եղիա Տեմիրճիպաշեանն առավել գործուն շարունակում է 80-ական թվականների կեսերից իր խմբագրած հանդեսներում:

«Ողբ ի վերայ Տիրուհույն» գրության մէջ, վկայակոչելով տարիներ առաջ Կոստանյան Գալուստ էֆենտիի տանը Տիրուհու հետ ունեցած

պաշյանը գրում է, թե «Վանական մը,- որ վանք մը, պիտ'ըսէինք, աշխարհք մը կ'արժէ,- Հայր Արսէն Այտընեան, հետամուտ եղաւ հայկեան բարբառին ծագման եւ բարեշրջութեան, /.../ բացատրեց ու պատմեց մեզ նախնեաց եւ այժմեաց բարբառներուն սկզբունքն ու յեղափոխութիւնքն» (Տե՛ս Մահ մանկավարժին, ԳԻՇ, 1884, տետր երկրորդ, էջ 29):

մտերմիկ գրույցը, Եղիան հիշում է, որ երկար խոսել են 1876-ի այդ օրերին վախճանված Նահապետ Ռուսինյանի մասին՝ ընդգծելով «ողբացեալ գրագետի» կարևոր դերը «ազգային վերանորոգութեան», «մանաւանդ լեզուի նորոգման գործին մէջ»: Ապա անցում կատարելով հին ու նոր աշխարհաբարներին՝ Տիկին Կոստանը շնորհավորել է նրան, որ մի հոդված էր հրատարակել «Մասիս»-ի մէջ՝ հին աշխարհաբարով ու նս մեկը՝ «Փունջ»-ի մէջ՝ նոր աշխարհաբարով, դրանով իսկ, ըստ իրեն, «լա եւս ի վեր հանելու համար հին աշխարհաբարին գերազանցութիւնն»: Աստիճանաբար, սակայն, խոսակցությունը պտտվելով արդեն «մեռեալ լեզուաց եւ կենդանի լեզուաց վրայ», պարզ է դառնում, որ Տիրուհին համոզված գրաբարյան է, քանզի պնդում է, թե «դէպ իր աղբիւրն, այսինքն դէպ ի գրաբարն /.../ պիտի վերադառնայ տակաւ աշխարհաբարն»: Այդտեղից մտերմների գրույցը փոխվում է բանավեճի, քանզի «Հոս անդունդ մը կը բացուէր մեր մտաց միջեւ», գրում է Եղիան: Իրավիճակն, իրոք որ, անելանելի էր՝ իր ետևում Լիդռեն էր, դրական իմաստասիրությունը, իսկ իր դիմաց՝ Տիրուհին՝ «կենդանի բանաստեղծութիւնն», նաև «լեզուաց ու մատենագրութեանց վեհագոյնն»՝ Ս. Գիրքը, ընդ որում՝ «հայերէն Աստուածաշունչն, Աստուածաշնչոյ թարգմանութեանց թագուհին»... Եղիան, թվում է, չէր կարողանում կողմնորոշվել՝ «Ի՞նչ դիրք հարկ էր բռնել. ինչպէ՞ս խօսիլ, ինչպէ՞ս շարժիլ»: Ս. Գիրքը, կարծես, լռելյայն նախատում էր նրան, թե՛ «ի՞նձ դէմ պիտի խօսիս, ի՞մ լեզուիս, ի՞մ ոճիս, ի՞մ ոգիիս. պիտի տա՞ս այդ գայթակղութիւնն, եւ դո՞ւ պիտի գործես այդ սրբապղծութիւնն. այդ հայեցողութիւնն հոգւոյ սրբոյ դէմ՝ ա՞յդ քու շուրթերէդ պիտ'արտաբերի, որք իմ վսեմութիւնս հանապազօր կը հռչակեն երկրի եւ երկնի»: Նույնքան ազդեցիկ էր նաև Տիրուհու՝ այդ «հրով ու հանճարով գեղուն գեղածաղիկ» կնոջ, Մուսայի, Սիրիլյայի «լռին» սաստը՝ «Ի՞նձ դէմ պիտ'ոգորիս. ե՞ղծ պիտ'արտասանես իմ դաւանանքիս. դու պիտի բեկանես ի՞մ վճիռս. բայց ես մինակ, ես միավանկ բառով մը կրնամ հերքել բոլոր քու փաստերդ ու քու հեղինակացդ ալ բոլոր փաստերն. ես ակնարկով մը կրնամ ցրել բոլոր համբարեալ հմտութիւնդ եւ արմատացեալ իմաստասիրութիւնդ. կրնամ ես՝ ամենիշխան տիրել ե՞րբ իսկ մտացդ եւ հոգւոյդ»: Իսկ Լիդռեն... Ի՞նչ պիտի խոսեր նա և ի՞նչ պիտի հակադրեր այնքան «սրտայոյզ ձայնից եւ սրտագրաւ պատկերաց...»: Լիդռեն, սակայն, լռում էր՝ «ոչինչ կը բարբառէր», գրում է Եղիան, այլ պարզապէս «անկարեկիր եւ անյարիր՝ իր անասան պատուանդանին վրայ, նա կը պատկերացնէր Դրական իմաստասիրութիւնն իր անսահմանութեան եւ անսխալութեան մէջ»: Եվ այդ «քերթօղական եւ իմաստասիրական պատգամաց մէջտեղ», թվում է, շփոթվում, մի պահ մոլորվում է Եղիան՝ նույնիսկ «տատամսեցայ, տագնապեցայ,- անկեղծորեն խոստովանում է նա:՝ Մակայն հուսկ ուրեմն արիացայ, յիշելով Արիստոտելն՝ որ իր մեծիմաստ վարպետին, գեղահրաշ կնոջ մը չափ այն պաշտելի Պլա-

տօնին համարձակած էր ըսել. *Քան ըզքեզ անելի կը սիրեմ ճշմարտութիւնն*»: Այդպէս, ահա, ուժ առնելով Արիստոտելից ու Լիդոնեից, հենվելով *Ճշմարտութեան* ամենագործողանքը, Եղիան կարողանում է՝ այնքան զգուշությամբ ու փափկությամբ, մեկ առ մեկ հերքել «դիմաբանուհոյ փաստերն»: Ի վերջո, հաղթողի խրոխտությամբ ու վճռականությամբ հայտարարում է՝ «Անհերքելի փաստերով հաստատեցի թէ գրաբարն, որ ինձ հիանալի կը թուէր, որ ինձ պաշտելի էր *Աստուածաշունչին* եւ *Եղծ աղանդոցին* մէջ, Եղիշէին եւ Շնորհալիին մէջ, եւ մանաւանդ Գողթան երգոց հատուկոտորներուն՝ այն գոհարներուն մէջ, չը պիտի վերակենդանանար երբէք»:

Բանավեճի սրումը գրաբար-աշխարհաբար խնդրի շուրջ

Այսպէս կոչված, «լեզուի խնդիրն» գնալով ավելի ու ավելի նոր թափ էր հավաքում՝ տեղիք տալով նաև սուր բանավեճերի: Ե. Տեմիրճիպաշյանը այդպիսի մի բարդ իրավիճակի մէջ էր հայտնվել 1883-ին՝ «Մասիս»-ում «Ֆռանսահայ բառագրքի հեղինակ» Նորայր Բյուզանդացու տպագրած մի հոդվածից հետո: Հոդվածը պատասխան էր Մեսրոպ Նուպարյանի «նոր ֆռանսահայ բառագրքին յայտարարութեան իրեն պատկան ինչ ինչ կետերուն», որով նա «աղերսանօք» հրավիրում էր գրեթէ բոլոր ազգային գրագետներին՝ պաշտպանելու իր բառագիրքը «ընդդէմ Զմիւռնացի բառագրին անիսի դճ քննադատութեանց», ընդ որում՝ «յականէ յանուանէ» հիշատակելով բանավեճի հրավիրյալներին: «Պարոն Նորայրի ցանկին մէջ անուանեալ գրագիտաց երեքս ասպարէզ իջան», - գրում է Եղիան: Բայց նոր էր իր հոդվածը հանձնել «Մասիս»ին, երբ հաջորդ օրն իսկ նույն թերթի մէջ կարդում է «*Մի աշխարհաբարեան* ստորագրությամբ նամակ մը», որում հեղինակը Ն. Բյուզանդացուն մեղադրում էր աշխարհաբարը «թշնամանելու» մէջ, ապա նաև «Գ.» ստորագրությամբ «հմուտ գրաբարեան մը» իր հոդվածում նրա բառագիրքը դասում էր գրեթէ «հանճարի գործոց կարգը»: «Այս երկու հակիրճ գրութեանց մէջտեղ» հայտնվում է Եղիա Տեմիրճիպաշյանի «Բարեշրջութիւն» վերնագրով գրությունը՝ «առ Պարոն Նորայր Բիւզանդացին», որտեղ նա լեզվի խնդիրը քննում էր «իմաստասիրական տեսակետով», եզրափակելով, թէ «*Այդ ախտէն դուրս փրկութիւն չը կա յ*»: Ընդ որում՝ «*ախտ*»-ի հիշատակումը պատահական չէր, քանզի, ինչպէս գրում է Եղիան, «Պարոն Նորայր Բիւզանդացին, որ ո՛չ գումի մէջ ծնած եւ ո՛չ ախտի մէջ դաստիարակութիւն առած է, քաջաբար ու քաղաքավարաբար ր ախտո յորջորջած էր արդի հայերէնն», այն հոդվածում, որն ինքը «*հմտալից որքան բորբոքալից*» էր անվանել: *Հմտալից* որովհետև նրա գրության մէջ ակնհայտ էր հին հայերենի հմտությունը, և *բորբոքալից*՝ որովհետև նույնքան ակներև էր նրա «իմաստասիրական անհմտութիւն»-ը, «տգիտութիւն»-ը՝ բարեշրջական օրենքների վերաբերյալ: Փոխվել է են ժամանակները, գաղափարներն ու նպատակները, ըստ Ե.

Տեմիրճիպաշյանի, այլևս հայությունը չի ծնրադրում «Հայկաբանին ու ճարտասանին առջեւ», այլ «բարեփոխելով Արիստոտելի ծանօթ ասութիւնն՝ Հայ ժողովուրդն այսօր կը գոչէ. Կը սիրեմ Հայկաբանութիւնն, այլ աւելի կը սիրեմ Իմաստասիրութիւնն...» («Գրասէր Ատոմ», 1884, էջ 75-76): Ժամանակի նոր պահանջ-ների տեսանկյունից նա իր լիակատար համաձայնությունն է հայտնում «Եղիազար Մուրատեանի *Ծաղիկ արդի մատենագրութեան*» երկասիրության մեջ արտահայտած այն կարծիքին, ըստ որի՝ մերժելով «մեր նուիրական լեզուն մեր վարժարաններէն վտարելու գաղափարը», պահանջում էր, որ «այն լուրջ ուսման առարկայ դառնայ մի միայն բարձրագոյն կարգաց՝ եւ պարտաւորիչ ամեն անոնց որք եկեղեցականութեան են սահմանուած», ինչպէս նաև վարժարաններում «կանոնաւոր ընթացքով» ուսուցանվի «մեր արդի լեզուն»՝ «խեղճ մանկտին» ազատելով «գրաբարի անօգուտ տանջանքէն»: Ավելին՝ Ե. Տեմիրճիպաշյանը համոզմունք է հայտնում, որ անկախ Կրթական խորհրդի որոշումներից, «գրաբարն արդէն բարձրագոյն դասերուն եւեթ աւանդելի ուսմանց կարգին մեջ պիտի բարձրանայ՝ տասնեւիններորդ դարուն վերջին ժամն հնչելէ յառաջ» (նույն տեղում, էջ 77-78):

Նորայր Բյուզանդացու պատասխանը Ե. Տեմիրճիպաշյանի «Բարեշրջութիւն» հոդվածին, որ ինչպէս նշում է նա, «նամակ մ'էր քան յօդուած», չի ուշանում: Ընդ որում, ըստ Եղիայի, միանգամայն «գոհացուցիչ» էր այդ «պատասխանագիրն», քանի որ, ըստ էության, հաստատում էր, որ «Բարեշրջութեան» ազդեցությամբ լուրջ փոփոխություն էր կատարվել իր բարեկամի «լեզուաբանական դաւանանքին մէջ»: Նա, որ մինչ այդ իր բանավոր և գրավոր ելույթներում հավատում ու պնդում էր, թէ «պիտի վերակենդանանայ Գրաբարն», աշխարհաբարյան էր դարձել: Եղիան ակնհայտորեն ոգևորված էր՝ «Ինչ որ չը կրցաւ ընել Մինաս Չերագ, Դրական իմաստասիրութիւնն ըրաւ զայն, Ժամանակն ըրաւ զայն,- հայտարարում է նա:- *Ազգային դաստիարակութիւնն* ի հիմանէ սարսեց գրաբարեաններն»: Եղիան մի առանձին գոհունակությամբ է նշում նաև իր «համեստ» ներդրումը պատմական այդ հաղթանակի գործում՝ ընդգծելով, որ իր «հարեւանցի» գրությունը, «որ շէնքի մը ուրուագիրն էր քան շէնքն իսկ, /.../ մտաց վրայ վճռական ազդեցութիւն մ'ունեցաւ. այդ գրութիւնս՝ գրաբարեաններն աշխարհաբարեան ըրաւ»: Փաստն այն էր, որ իր «Բարեշրջութիւն» հոդվածից հետո, «երեք գլխաւոր գրաբարեանք», որոնց մեջ էր նաև Նորայր Բյուզանդացին, «յայտարարեցին զինքեանս աշխարհաբարեան»: Նշանակում է, իր հիմնավորումները, համոզումները, թերևս, նաև «սպառնալիքները», տեղ էին հասել, տվել էին իրենց ցանկալի արդյունքը, ինչը նոր ճանապարհ էր բացում ավելի եռանդով պայքարելու, առաջ գնալու համար: Եղիան ակնհայտորեն իրեն բարիկադների վրա էր զգում՝ բայց... «Եթէ գաղափարաց յետաշրջութիւն մը կատարուի, մարտական կեցվածքով զգուշացնում է նա,- գրաբարեաններ էթէ նորէն

երեւան գան, ես հոս եմ: Վա՛յ անոր՝ որ ինձ դէմ ելնէ. դրական իմաստասիրութիւնն ունիմ իմ ետեւս, եւ իմ առջեւս – ապագա՛ն...» (նույն տեղում, էջ 126-127):

Հայտնի է, որ նշված ժամանակաշրջանում արդի լեզվի խնդիրը օրակարգային էր ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ իրականության մեջ: Եղիա Տեմիրճիպաշյանը, համախոհների հետ, իհարկե, հետևում էր նաև արևելահայ պարբերականներում արտահայտվող կարծիքներին ու տեսակետներին: Եվ ոչ միայն հետևում, այլև ակտիվորեն արձագանքում էր: Այդպիսի արձագանքներից մեկն էր «Զարգացումն հայ մտաց և հայ լեզուի» վերնագրով հոդվածը «Երկրագունտ»-ի էջերում, որն, ըստ էության, պատասխան էր Սպանդար Սպան-դարյանի «Նոր-Դար»-ում տպագրված և «Հայրենիք» օրաթերթում արտատպված «Հայոց լեզուն» խորագրով հոդվածի: Բանն այն է, որ «Նոր-Դար»-ի խմբագրապետը «ցառով» նկատում էր, թե «մեր լեզուն, մեր գրական լեզուն, եթե մի քայլ առաջ է գնացել, միեւնոյն ժամանակ քան քայլ էլ յետ է գնացել»: Եվ քանի որ խնդիրը ոչ միայն ռուսահայոց, այլև «ընդհանուր Հայոց գրական լեզուին վրայ» էր, Եղիան հարկ է համարում հենց սկզբից հայտարարել, որ «*Երկրագունտ* այս խնդրոյն վրայ բոլորովին տարբեր կարծիք ունի *Նոր-Դար*էն»: Նախ՝ «Հայոց գրական լեզուի զարգացումն վեճի տակ ձգելն, նոյն իսկ Հայ մտքին զարգացումն վեճի տակ ձգել...», կնշանակի՝ համոզված էր Եղիան: Ահա թե ինչու, մարտահրավերի նման հարց էր ուղղում հոդվածագրին՝ «Մի՞ թէ՞ Պարոն Սպանդարեան կը յանդգնի՞ զայդ ալ ընել. կամ միթէ՞ կը յանդգնի՞ պնդել թէ լեզուին զարգացումն անկախ է մտաց զարգացումէն»: Իր համար պատասխանը, իհարկե, միանշանակ էր՝ «Անշուշտ ոչ», քանզի՝ «Ամենադիւրիին էր ապացուցել Հայ մտքին զարգացումն...» (Ե ա, 1887, էջ 449-450): Ապա արդեն քանիտրորդ անգամ ներկայացնելով «Բարեշրջական զօրութեան» ներքին և արտաքին (պատմության, միջավայրի, օտար մշակույթների և գրականությունների) ներգործությունների վերաբերյալ գիտական նորագույն տեսությունները, Եղիան գրում է, թե «Պարտէինք խօսիլ հինգերորդ ներգործութեան մը վրայ ալ», այսինքն՝ «ժողովրդեան ներգործութեան», որի ազդեցությամբ «հին գրական ձեւն հետզհետէ տեղի կուտայ...»: Եվ ապա՝ վկայակոչելով միջին դարերում «լատին լեզուին իտալականի, սպանիականի, և գաղղիականի» փոխարկման իրողությունը, ըստ Լիդռեի, Պոյունդիեռի և այլոց, հաստատում է, թե «Նոյն բարեշրջութիւնն որ մտքին մէջ կը կատարուի, լեզուին մէջ ալ միանգամայն կը կատարուի»: Ընդ որում՝ մեկնաբանում է նա, «մէկ կողմանէ մեծ ընդլայնում, միւս կողմանէ մեծ սեղմում յառաջ կուգան լեզուին մէջ», վիպասանի, գրագետի «դատմանց մէջ նոյնպէս անօրինակ սեղմութիւն մ'ի յայտ կուգայ» (նույն տեղում, էջ 453-454): Ի վերջո, գովելի համարելով Ս. Սպանդարյանի հոդվածի «շարժառիթն և ոգին», Ե. Տեմիրճիպաշյանը հավաստում է, թե միանգամայն կիսում է հոդվածագրի այն նպատակա-

դրումը, որ «աւելի մեզ Հայերիս համար, ազգային եկեղեցուն հետ մեր մայրենի բարբառը, Հայերէն լեզուն շատ սիրելի և թանկ լինէին» (նույն տեղում, էջ 456):

Չնայած մեծ դիմադրությանը՝ աշխարհաբարի առաջընթացը թվում էր անկասելի է: Ինչ վերաբերում է գրաբարին, ապա, ըստ Ե. Տեմիրճիպաշյանի, նրա «վերակենդանութեան դրապէս հաւատալ անհնար է. բարեշրջական վարդապետութեան դաւանող Հայ հեղինակաց մէջ, մեծանուն Մատաթիա Գարագաշեանն է միայն, /.../ որ Հայոց հին լեզուին յարութեան համար հաւատք ունի»: Ամիսներ առաջ Եղիան նույնիսկ ավելի խիստ էր արտահայտվել, գրելով, թէ «իմաստասերի մը, բանասերի մը, որպէս է Տ. Մատաթիա Գարագաշեան, ներելի չ'է հին լեզուաց վերակենդանութեան հաւատքն ունենալ»: Եվ ապա՝ «մեծապէս կը յարգենք Գարագաշեանն իբրեւ հայկաբան. այլ բանասիրութիւն (Philologie) ուսանելու համար կը դիմենք Հուրիդնէի,- որ կը հռչակէ թէ հին լեզուներն ոչ պիտանի խօսուին ոչ գրուին նորէն» (Ե ք, 1886, էջ 47): Նույն տեսակետը Եղիան հայտնել էր նաև իր խմբագրած «Գրական և իմաստասիրական շարժում»-ի (այսուհետև՝ ԳԻՇ) էջերում՝ Կատուի բերանով: Մխիթարյանների կողմից «ծայրէ ծայր գրաբար» հրատարակվելիք մի հանդեսի մասին տեղեկատվության կապակցությամբ, նա գրել էր, թէ այդ հանդեսն «անշուշտ չը պիտի հրատարակուի սա պարզ պատճառաւ զի Մխիթարեանք իրենց Բազմավէպն իսկ աշխարհաբար կը գրեն եւ զի գրաբարին նորն ալ յարգի չ'է գինիին նորին նման» (Տեմիրճիպաշեան ք, 1885, էջ 192):

Մյուս կողմից, սակայն, նա ստիպված էր խոստովանել, որ կան նաև «անձինք, որք չեն հաւատար աշխարհաբարի կանոնաւորման, բիրեղացման...»: Փաստն այն էր, որ ինչպէս դեռևս 1885-ին, Լյուդվիգ Հալևիի «Աբբա Քօնսթանթին» վեպի Եվփիմե Օտյանի թարգմանության առիթով, նկատում էր Եղիան, «Հայ լեզուն, Հայոց գրական լեզուն, այսօր երկուք է. մին քերականական, ոյր մեծագոյն ներկայացուցիչն է միշտ Տ. Մինաս Չերագ. Իսկ միւսն հաշտ չ'է քերականութեան հետ, լեզուին ազատութեան նախանձախնդիր է, եւ գրաբարի ձեւերուն գործածութեամբ միայն կը հաւատայ՝ թէ մեր աշխարհաբար լեզուն պիտի հարստանայ. այս լեզուի վեհագոյն ներկայացուցիչն անտարակոյս Օտեան էֆէնտին է»: Նա խոստովանում է, թէ նույնիսկ «հոգով չափ կը տրտմիմ, մտածելով որ օր մը – թէեւ այդ օրն հեռի կը թուի – Օտեան էֆէնտիի գրուածք պիտի կարդացուին որպէս այսօր կը կարդացուին Միջին դարու ֆռանսական գրականութեան հատուածք»: Մեջբերելով Գր. Օտյանի՝ հիշյալ թարգմանության առթիվ քրոջը գրած նամակի տողերը՝ «Ուղղախօս չես միշտ, զի լեզուն դեռ կանոն չ'ունի եւ թերեւս դու ալ, ինծի պէս, այս անկանոնութեան մէջ առաւելութիւն մը կը գտնես, աւելի փոփոխութիւն եւ աւելի տարածութիւն», Եղիան ավելացնում է, թէ «Այդ փոփոխութիւնն ու տարածութիւնն օր քան զոր պիտի կորուսանէ լեզուն», ինչպէս և ցույց է տալիս

այլ լեզուների փորձը: «Ֆռանսերէնն՝ սկսելով Մալէոպէն՝ կանոնադրուած հաստատուած լեզու մ'է,- գրում է նա,- բայց, աւա՛ղ, ո՛ր է հին ֆռանսերէնին քաղցրութիւնն ու փափկութիւնն ու ներդաշնակութիւնն»: Չնայած կորուստների գնով, բայց պատմական իրողությունն այն է, որ արդի լեզուն գնում է դեպի միօրինակություն: Ե. Տեմիրճիպաշյանը համոզված էր, որ «ամեն տեղ ուր Հայ կայ՝ մէկ լեզու պիտի խօսուի միօրինակ. մէկ լեզու պիտ'ունենան բոլոր Հայ հեղինակք»: Թեկուզն՝ «յայնժամ մնաք բարով պիտ'ըսենք բազմահոլով մեր հոլովներուն ու շնորհաշուք մեր շրջումներուն, գրաբար այն քաջոլոր դարձուածքներուն ու մեր այն գանգրահեր պարբերութիւններուն, մեր մանուածապատ բանից՝ որք յուլաբար հեշտաբար ման կու գան ամեն մասերն ալ զարնանագեղ մարգերուն. հրաժեշտ պիտի տանք, աւա՛ղ, այդ ամենուն...»: Այսինքն՝ Չերազյան աշխարհաբարը, չնայած նաև Ե. Տեմիրճիպաշյանի համառ ջանքերին, միանշանակ չէր ընդունվում բոլորի կողմից: Ահա թե ինչու, տարիներ անց Եղիան ստիպված էր ընդունել, որ «Անհատական Քերականութիւն մը, ո՛րքան ալ հանճարալիւր ըլլայ հեղինակն եւ ո՛րքան ալ փառաւոր իր գրական արտադրութիւնք, /.../ անհնար է որ ամբողջովին ընդունուի ամբողջ ժողովրդեան մը կողմանէ»: Նրա կարծիքով՝ դա միանգամայն օրինաչափ էր «մանաւանդ մերինին նման ժողովրդեան մը կողմէն, որ՝ աշխարհագրական միութենէ գուրկ՝ գուրկ է հետեւաբար ե՛ւ տրամադրութեանց նոյնութենէ...»: Ուրեմն և, բնական է, ըստ Եղիայի, որ «ընտրողական աշխարհաբարը մասնաւորաց կողմանէ միայն պիտ'ընդունուէր, որպէս եղաւ իսկ»:

Եղիան միանգամայն անկեղծ էր իր դատողությունների մեջ, որովհետև վաղուց՝ ինչպէս ինքն է խոստովանում՝ «Փիլիսոփայական բառարանէս ի վեր – որոշած եմ ո եւ է կանոնի չենթարկել այլ եւս իմ լեզուս. ներդաշնակութեան առաւել ուշադրութեամբ՝ նոյն լեզուն այսօր կը գրեմ գոր կը գրէի *Դամբարանէն* ու *Նոր կէանքէն* յառաջ, յորժամ ինքնագլուխ էի՝ որպէս այսօր՝ չը պատկանելով եւ ո՛չ մէկ դպրոցի», ըստ էության, ունենալով ինքն իր՝ Տեմիրճիպաշյանական դպրոցը, որի մասին ժամանակին ակնարկել էր նաև Մ. Չերազը՝ երբ «արդի լեզուին այլեւայլ դրութեանց կամ դպրոցաց դասուն մեջ պատիւ կ'ըներ յիշատակել ե՛ւ *Տեմիրճիպաշյանի դպրոցն*»: Հատկանշական է այստեղ նաև Եղիայի այն խոստովանությունը, թե գրական իր որևէ գործն ավարտելուց հետո, երբ ընթերցում է այն և վկայակոչելով Լուկրեցիոսին՝ «ականջս՝ ազահ ներդաշնակութեան գոհ կ'ըլլայ», հիշում և կրկնում է Գր. Օսյանի հայտնի արտահայտությունը, թե՛ «*Կարգը այս անկարգութեան մեջ է*» (Տեմիրճիպաշյանի դ, 1885, էջ 95-96): Դրանով Ե. Տեմիրճիպաշյանը, ըստ էության, հավատում էր, որ կողմնակից է արդի լեզվի ներքին ճոխության ու բազմազանության, մի բառով՝ հարստության:

Բացի այդ՝ նա նկատում է, որ անցած տարիների ընթացքում Չերազյան աշխարհաբարը որոշակի բարեշրջության է ենթարկվել: Եվ համոզված է, որ եթե հենց սկզբից արդի վիճակով ներկայացվեր, կրնդունվեր եթե ոչ բոլոր, ապա «աւելի թուաւոր» գրագետների կողմից: Ե. Տեմիրճիպաշյանի կարծիքով՝ շատերին խրտնեցրել էր «հոլովմանց միօրինակութիւնը», որ Մ. Չերազը ներմուծել էր իր լեզվի մեջ՝ հետևելով Ն. Ռուսինյանի «Ուղղախօսութեան»-ը: Դրանից հետո, սակայն, ընտրողական աշխարհաբարը աստիճանաբար փոփոխվել, բարեշրջվել է, «և, դեռ եւս բարեշրջելով, օր մը հանուր ազգին լեզուն անտարակոյս պիտ'ըլլայ այն» (Ե գ, 1887, էջ 467-469):

Արդի լեզվի կարևորությունը կրթական բարեփոխումների համատեքստում

Լեզվի և կրթության բարեփոխումներին նվիրված Ե. Տեմիրճիպաշյանի ելույթներում կուտակված հարցադրումների բազմազանության և դրանք հանրագումարի բերելու տեսակետից, առանձնանում է «Կրթական խնդիր» խորագիրը և «Թէ Հայք հաւասար ե՛ն ֆռանսացոց...» ենթախորագիրը կրող ծավալուն հրապարակումը, որը գրվել էր Ասիական ընկերության Տնօրեն ժողովի հանձնարարությամբ, որպէս բանախոսություն ընկերության «Մարտ 2ի լսարանին համար» և որը, ինչպէս խոստովանում է Եղիան, «պիտ'արտասանէի, եթէ Հայ բանախօսներէն մին ներկայ չը գտնուէր անակնկալ արգելանք»: Բանախոսությունն սկսվում էր լսարանի համար անսպասելի և... տարօրինակ «աւետիսով», թե «ֆռանսացոց հաւասարած են Հայք»: Այն, ինչ չէին կարողացել անել բազմաթիվ դարերը, «այնքա՛ն թագաւորաց ու նախարարաց ու մատենագրաց աշխատութիւնք, այնքա՛ն պատերազմունք եւ այնքա՛ն յեղափոխութիւնք», իրագործել էր արդի ժամանակը՝ վերջին քառորդ դարը՝ «Եւրոպայի մէկ ծայրն՝ որ հագիւ Եւրոպա կը համարուի», ծվարած հայությունը հավասար կացուցանելով «ֆռանսական այն մեծ ազգին»: Ապա՝ հետաքրքրված, զարմացած ունկնդիրների բնական հարցումին, թե «Բայց ի՞նչպէս հաւասարեցանք», պատասխանում է իր տեսակետը հաստատող մեկ այլ հարցմամբ՝ «հապա՛ լատիներէնի խնդիրն, որ ի Ֆռանսա կը յուզուի յաւէտ քան երբեք: Ո՞չ ապաքէն մեք Հայքս ալ կը զբաղինք այսօր գրաբարի խնդրով: Ահա ինչպէս Հայերս հաւասարեցանք ֆռանսացոց...»: Այնուհետև, բողոքելով ենթադրյալ այն իրավիճակի դէմ, որ ասվածը, թերևս, պիտի հարուցեր ունկնդիրների ծիծաղը, Ե. Տեմիրճիպաշյանը, արդեն ամենայն լրջությամբ, հաստատում է, թե «ֆռանսական մեծ ազգին, դարերէ ի վեր անընդհատ զարգացող ու յառաջացող այն հոչակաւոր ազգին, փոքրիկ Հայ ազգն՝ հագիւ կէս դար յառաջ զարգանալ սկսող աննշան Հայ ազգն՝ հաւասար է գրեթէ կրթական խնդրոյն մէջ»: Իսկ դա չափազանց կարևոր է, քանզի, նրա համոզմամբ, «ազգի մը կրթական վիճակն ո՛չ ապաքէն այդ

ազգին զարգացման աստիճանաչափն է» (Տեմիրճիպաշեան ը, 1886, էջ 145-146):

Հաջորդ էջերում, ներկայացնելով ֆրանսիացի մի շարք հեղինակների (Ֆոարի, Պիկո, Զօլա նն) տեսակետները և նույնիսկ տեղ-տեղ բանավիճելով նրանց հետ, Ե. Տեմիրճիպաշեանը հաստատում է, թե «Ամեն պարագայի մէջ, լուսագոյնն այն է թէ կրթութիւնն ոչ գրական ըլլայ միայն եւ ոչ միմիայն գործնական. այլ ըլլայ *բարեխառն, հաւասարաբաշխ, բանասուր»* (Ընդգծումը.– Պ. Դ.: Նույն տեղում, էջ 153): Այսինքն ըստ նրա, ինչպես ժողովրդի կյանքի բոլոր ոլորտներում, այդպես էլ լեզվի ու կրթության զարգացումը պետք է կատարվի միայն բնական ընթացքով, աստիճանաբար, այնպես, ինչպես սեղմ ու դիպուկ սահմանել է «բարեշրջութեան մեծ վարդապետն»՝ «արմատական փոփոխութիւնք բնութեան դէմ են՝ կ'ըսէ Լիդոէ. պետք չէ յեղաշրջութիւն, այլ պետք է բարեշրջութիւն» (նույն տեղում, էջ 156):

Իմաստասիրական հիմնարար այս սկզբունքը հաստատելուց հետո Ե. Տեմիրճիպաշեանն անցնում է այն հիմնախնդիրների թվարկմանը, որոնք առկա են ինչպես հայ, այնպես էլ ֆրանսիական կրթական ու լեզվական ասպարեզներում, և որոնք հրատապ լուծում են պահանջում: «Եւ դուք ալ չհամոզուեցա՞ք թէ ֆռանսացուց հաւասարած ենք մենք արդէն,- դիմելով ունկնդիրներին, ասում է նա,- զի երկուքս ալ միեւնոյն խնդրով կը զբաղինք, հին լեզուին խնդրով: Երկուքս ալ կը պահանջենք որ մեր յայտագրաց մէջ կամ մանաւանդ մեր վարժարանաց մէջ (զի յայտագրին մէջ եղածն հանապազ չկայ վարժարանին մէջ) ավելի տեղ տրուի գիտութեանց ու կենդանի լեզուացն: Երկուքս ալ կը գանգատինք թէ մեր բոլոր վարժարանք առողջապահական պայմանաց համեմատ չեն շինուած. կը գանգատինք թէ մեր կրթութիւնն աստիճանական չէ դեռ. թէ մեր ուսուցիչք փոքրիկ մանկանց կը խօսին այնպիսի՝ բաներու վրայ, գորս իրենք ալ մերթ անկարօղ են լաւ հասկնալ. թէ բարձրագոյն դասուց կը վերապահուին ուսումներ, որք պարտէին նախնական դասերէն սկսիլ աւանդուելու. թէ բաւական կարեւորութիւն չը տրուիր այն *գերազանցօրէն ընկերական գիտութեան*, Համարակալութեան (Comptabilité),- բազմանշանակ հավելելով՝ «Հապա՞. ֆռանսացիք ալ կը գանգատին այս նկատմամբ»: Ավելին՝ բերելով մի քանի օրինակներ արդի ֆրանսիական կրթությունից, նույնիսկ հռետորական հարց է տալիս, թե «Մեր գաւառական վարժարանաց, մեր հայրենեաց գիւղական դպրոցաց աշակերտք աւելի՞ տգէտ, աւելի՞ տխմար են միթէ, Հայուհիք եւ Հայք»: Ու այդ ամենից հետո, ըստ նրա, ընդհանուր եզրակացությունն այն է, որ «Ֆռանսացիք եւ Հայք նոյն վերքերն ունին, երկու ազգերն ալ նոյն բարեկարգութեանց կարօտին. այո՛, հաւասար են Հայն ու Ֆռանսացին»: Իսկ եթէ դարձյալ ծիծաղողներ պիտի լինեն այդ պնդման վրա, ապա, ընդհակառակը, անհունորեն պիտի տրտմի՝ Եդիան, քանզի նմանության հետ, կան նաև ցա-

վալի տարբերություններ՝ ոչ հայության օգտին: Պիտի տրտմի՝ հիշելով, որ «քառասուն միլիոն ֆռանսացիք կը խօսին բոլորն ալ իրենց մայրենի լեզուն, մինչ երեք միլիոնի վերածուած Հայք կը խօսին հոս թուրքերէն, տեղ մ'անգլիերէն, տեղ մ'ալ լեհերէն, ուրիշ տեղ մ'ալ ուլահերէն, հունարէն, եւն, եւն»: Նաև հիշելով, որ «Ֆռանսան ամեն աստիճանի դպրոցներ ունի հազարաւոր ու բիւրաւոր, թէ Ֆռանսան ունի գիտութեանց ու դպրութեանց մեծ համալսարաններ, մինչ մենք անկարօղ եղանք՝ քանի տարիներէ հետէ՝ բանալ փոքրիկ, փոքրիկ Կեդրոնական վարժարան մը, որ անտարակոյս ֆռանսական լիկեոնէ մ'աւելի բան չը պիտի ըլլայ – թերեւս ալ նուազ ըլլայ»: Հիշելով նաև, թէ «մեր առաջին օրաթերթն հազար օրինակ միայն կը սպառի, մինչ անհամար առաջնակարգ ֆռանսական օրաթերթք ունին հարիւր հազարաւոր օրինակաց սպառում. թէ մեր քանի մը վտիտ Հանդէսներն հազիւ հազ կ'ապրին, մինչ ի Ֆռանսա հսկայ Հանդէսք կը հիմնուին ու կը քաջալերուին յաւետ»: Եվ ապա՝ հիշատակելով «Լառուսի Տիեզերական Բառարանն», հարց է տալիս իրեն, թէ «ի սկզբանէ անտի Հայ լեզուա՛ւ տպուած գրեանց մէջ այնքան տառ – եւ այնքան գաղափար – կա՞յ որքան այն միակ բառագրքին մէջ»... Ու, թերևս, նաև յուրովի արձագանքելով իր մելամաղձոտ խառնվածքի և էության մասին տարածված կարծիքին, վկայակոչում է Խրիմյան Հայրիկին, որն օրեր առաջ հարցրել էր իրեն՝ «Դո՞ւ տրտմութիւնը կը փնտռես, թէ տրտմութիւնը քեզ»: Եվ ինքը պատասխանել էր՝ «Վերջինն աւելի ճշմարիտ է, Սրբազան Հայրիկ», ըստ էության, խոստովանելով, որ իր տխրության, տրտմության թէ մելամաղձության բուն աղբյուրը կամ պատճառն ազգի անմխիթար, ցավագին վիճակն է... Սակայն այդ տրտմագին նոտայով չէ, որ Եղիան ավարտում է իր ծավալուն բանախոսությունը: «Երբ դուրս ելնէք մեր Պատրիարքարանէն աւելի շքեղ այս բանասրահէն, դիմելով ներկաներին ասում է նա, - եւ ձեր զաւակունք հարցնեն ձեզ թէ Տեմիրճիպաշեան ի՞նչ բանի վրայ խօսեցաւ, ուրիշ պատասխան մի՛ տաք, կ'աղաչեմ. մի՛ ըսէք թէ Տեմիրճիպաշեան ֆռանսական ազգին մեծութեան վրայ խօսեցաւ եւ Հայ ազգին վրայ լացաւ Երեմիայի նման. ըսէք միայն «Պատուէր տուաւ Տեմիրճիպաշեան թէ ձեր մայրենի լեզուն՝ հինն ըլլայ կամ նոր՝ սիրէք ու սորվիք ամեն բանէ յառաջ»: Չայն ըսէք ձեր զաւակաց ամեն առաւօտ եւ ամեն երեկոյ» (նույն տեղում, էջ 157-160):

Վերը թվարկված լեզվական ու կրթական խնդիրների շուրջ Ե. Տեմիրճիպաշեանի գրած բազմաթիվ ելույթներով, հոդվածներով ու հրապարակումներով լի է ժամանակի մամուլը: Դրանց մեջ, սակայն, Կեդրոնական վարժարանի հիմնման և տարբեր բառարանների ստեղծման հարցերն առանձին կարևորություն ունեին Եղիայի համար:

Թե՛ծ բանավեճեր «բառագրքերի» շուրջ

«Կատուի մը յիշագիրք»-ում հաստատելով, թէ «...բառագրոց յաճա-

խութիւնն /.../ ազգաց յառաջադիմութիւնը կ'ապացուցանէ», նա ուրախությամբ արձանագրում է, որ վերջին տարիներին մեզանում «փոքր ու մեծ, գրպանի ու գրասեղանի բառագիրքեր կը հրատարակուին» (Տէմիրճիպաշեան գ, 1886, էջ 193): Եղիա Տէմիրճիպաշեանն իր գործունեության ընթացքում հրատարակել է մի քանի բառարան՝ «Փիլիսոփայական բառարան»-ի նախափորձն ու փորձը (1879, 1880), ինչպէս նաև «Ֆռանսահայ բառագիրք»-ը (1886) և «Ֆռանսերէնէ հայերէն»՝ «Գրպանի բառագիրք»-ը: Ընդ որում՝ մինչ Եղիայի «Բառագիրք»-ը, արդէն իսկ թե՛ բանավեճ էր ընթանում այդ հարցի շուրջ, որն հայտնի էր Նորայր-Նուպարյան լեզվապաշար անունով: Բանն այն է, որ մինչ այդ եղած նմանատիպ Էմինյան և Գանթարյան բառարանները այլևս չէին բավարարում արդի ժամանակի պահանջները և նոր՝ բառերով ավելի հարուստ և դյուրամատչելի բառարանների ստեղծման անհրաժեշտությունն առավել քան զգալի էր: Անդրադառնալով հիշյալ խնդրի շուրջ ծավալված բանավեճին՝ Ե. Տէմիրճիպաշեանը հաստատում էր, թե 1870-ի վերջին-80-ականի սկզբներին, իրոք, արդէն զգացվում էր «մեծ ֆռանսահայ բառագրքի մը պէտքն, ուր գտնուին ֆռանսերէն լեզուին բոլոր բառերն, նոցա բոլոր առումներն, եւ նոյն լեզուին յատուկ ասացուածներն»: «Շարժում»-ի առաջին տետրերից մեկում, անդրադառնալով «Ֆռանսաթուրք բառգիրք»-ի հրատարակությանը, Եղիան գրում է, թե «փափաքելի էր, որ ունենայինք նոյն գնով ու նոյն պարունակով ֆռանսահայ բառագիրք մ'ալ»: Այդ փափագը հիմնավորում էր նրանով, որ տաճկահայոց համար, ըստ հոգեբանների, «երեք տեսակ հոգեկան երեւոյթներ ու ու կարօղութիւններ»՝ զգացմունք, մտածմունք և գործողություններ բնորոշող երեք լեզուներ կան, որոնցից «անտարակոյս առաջինն է Հայ լեզուն, զոր քաղցր ու նշանակալի բառով մը կ'անուանենք *մայրենի լեզու*» և որն է «*զգացման լեզուն*»: Երկրորդը ֆրանսերէնն է՝ «աշխարհի բոլոր լեզուաց պայծառագոյնն եւ նոր ժամանակաց տիեզերական լեզուն» զոր պիտի կոչենք *մտածման կամ գաղափարի լեզուն*»: Եվ երրորդը՝ թուրքերէնը, որ «գործի լեզուն, գործածական լեզուն է. բնապէս այդ լեզուաւ կը կատարուին տիրօղ ազգին ու տիրօղ պետութեան հետ մեր առտնին, առեւտրական, դատական ու վարչական յարաբերութիւնք»: Սակայն Եղիայի համար առավել կարևորվում էին ֆրանսերէնն ու ֆրանսահայ բառարանի շուտափույթ ստեղծումը, քանի որ «այդ լեզուաւ է որ կը ստանանք ընդհանրապէս այն լուսաւոր գաղափարներն եւ այն գիտական ծանօթութիւններն, /.../ կ'ուսանինք ուղիղ խորհիլ եւ ուղիղ խօսիլ կամ գրել. այդ լեզուաւ է որ՝ իբր փորձաքար մը՝ ճշդիւ կը ցուցնէ թէ գրուած մ'ինչ կ'արժէ իմաստի թէ՛ բացատրութեան կողմէն» (Տէմիրճիպաշեան է, 1883, էջ 100-101): Եվ, ահա, լույս է տեսնում Նորայր Բյուզանդացու «Բառագիրք ի Գաղղիերէն լեզուի ի հայերէն» բառարանը, որի երևումն իսկ ստեղծված պայմաններում մեծ հետաքրքրություն է առաջ բերում՝ նպաստելով հեղինակի համբավի աճին: Այդ բառարանը, սակայն,

ամբողջովին անթերի, կամ «անսխալական» չէր, թեև «դիտողություն մը միայն կ'ընէին, ոմանք ցած ձայնով, այլք բարձրաձայն,- գրում է Եղիան,- աս'ն թէ սոյն բառարանն օգտակար է'ւս պիտ'ըլլար, եթէ աշխարհաբար ըլլար»: Ի դեպ, այդ դիտողությունն առաջին անգամ արվել էր Զմյուռնիայից, ուր աշխարհաբարի նկատմամբ ուշադրությունն առավել բացահայտ էր արտահայտվում: Պատահական չէր, ուրեմն, որ Նորայրի բառարանի հրատարակությանը զուգահեռ, «Մեսրոպ Նուպարեան Զմիւռնիայէն յղեց իւր ֆռանսերէնէ յաշխարհիկ հայերէն բառարանին Յայտարարութիւնն, ոյր մէկ պարբերութենէն ծնաւ... Տրովադայի նոր պատերազմն»: Ըստ Եղիայի՝ այն ժամանակ Կ. Յուրուճյանի «Մասիս» օրաթերթը «հաւասարապէս» իր էջերը բացելով բանավիճող կողմերի համար, նպաստեց անաչառ պայքարի ընթացքին: «Եւ երկու բան յայտնուեցաւ այս առթիւ,- շարունակում է Ե. Տեմիրճիպաշյանը:- Նախ աս'ն թէ, Պ. Նորայր Բիւզանդացի՝ լեզուի, բառագրքի, եւն, պայքարներ վարելու համար ոչ նիւթական ոչ բարոյական կարօղութիւն ունէր. աւելի պարզ խօսելով՝ նախկին վանական այն գերահռչակ բառագիրն ոչ լեզուաբանական հմտութիւն ունէր բաւական եւ ոչ բաւական պաղարիւնութիւն. Եւ ապա աս'ն թէ՝ Նորայրեան բառարանին նկատմամբ յայտնուած ընդհանուր համակրանաց հակառակ՝ ֆռանսերէնէն յաշխարհաբար հայերէն բառագրքի մը հրատարակութեան փափագօրք շատ, յոյժ շատ են եղեր ազգին մէջ»: Ահա թէ ինչու, նկատի առնելով նաև Մ. Նուպարյանի տպագրած «Նորայրեան բառարանին սխալներն» հոդվածը, Եղիայի կարծիքով, վերջինս, կամ ավելի ստույգ, «Զմիւռնիա՝ տարաւ յաղթանակն»: Ընդ որում՝ նա հատկապէս շեշտում էր «Զմիւռնիա բառն, որովհետեւ Նորայր Բիւզանդացին եւ բոլոր Վանքն իրեն հետ չէին հանդուրժեր որ այն երկու մեծագոյն գրիչք անբաժանելիք՝ Մամուրեան եւ Չիլինկիրեան՝ ախոյեան հանդիսանային ազգին մէջ բանասիրական գիտութեան եւ աշխարհաբար լեզուի»: Այդ մթնոլորտում էր, ահա, որ «տկարանալու տեղ ստուարացաւ ու զօրացաւ» Զմյուռնիայի բանակը՝ «ի հեճուկս վանականաց եւ յետադիմականաց»: Հանդես եկան դոկտոր Կոստանոյանը, «Դրական իմաստասիրութեան յարեալ» երիտասարդ վաճառական Գր. Մսերյանը, ապա նաև Մեսրոպ Նուպարյանը, որն իր բառարանի հրատարակման հայտարարությամբ «իւր գլխոյն վրայ հրաւիրեց բոլոր Զմիւռնական դպրոցին համար պատրաստուած շանթինքն», ընդ որում՝ «յորոց շանթօղն աւելի վնասուեցաւ քան շանթեալն»: Ի դեպ, ֆրանսերէն-հայերէն մի բառարան էլ գրել էր փարիզաբնակ ճանաչված մանկավարժ, պատմաբան, բանասեր Գվիլոն Լուսինյանը, սակայն Ե. Տեմիրճիպաշյանին գրած 1884 թ. հոկտ. 23-ի նամակում հայտնում էր, թէ դադարեցրել է տպագրությունը՝ «որպէս զի Նուպարեան Մեսրոպ էֆէնտին, որ նմանօրինակ երկասիրութեան մը ծանուցումն ըրաւ ի լրագիրս, կարօղ լինի անխափան հրատարակել»: Հատկանշական է, որ իր այդ որոշումը նա հիմնավորում էր նրանով, թէ

«Մենք չենք յօժարիր բնաւ արգել կամ վնաս պատճառել Ազգին երիտասարդ ժրաջան գործիչներուն, այլ ընդհակառակն՝ խրախուսել զնոսա եւ նպաստել իսկ, եթէ հնար է»: Ընդ որում՝ Գ. Լուսինյանն իր բառարանի հրատարակումը կասեցնում էր արդէն երկրորդ անգամ՝ Մ. Նուպարյանի սկսած բաժանորդագրությանը չխանգարելու համար: Իսկ մինչ այդ տպագրել էր իր երկասիրության «առաջին թերթն», որը, թերևս, ավելի հաջողված էր. «Նոքա որք տեսած են սոյն առաջին թերթն,- ծանոթագրում է Եղիան՝ Գ. Լուսինյանի նամակի հրապարակման մեջ,- Լուսինեան Բառագրոց անհամեմատ ճոխութեան կը վկայեն: Ուստի ցաւալի է թէ Հայ գրականութիւնն այդպիսի գործէ մը կը զրկուի՝ Մեծաշուք հեղինակին տարապայման փափկանկատութեան պատճառաւ» (ԳԻՇ, 1884, էջ 202-203)¹:

Նշելով, որ ասվածից ամեննին չի հետևում, թե պետք է դիտել Նորայր Բյուզանդացու «բառագիրքն իբրև անարժէք աշխատութիւն» Ե. Տեմիրճիպաշյանը կարծում է, սակայն, որ «Մխիթարեանք, եթէ ճշմարիտ գրագետներ են՝ որպէս կը յաւակնին ըլլալ, ծանօթանան, հետեւին Վանքէն դուրս տեղի ունեցած գրական շարժման, մանաւանդ զի՝ եթէ բացառենք Ալիշանն՝ այսօր Վանքէն դուրս տեղի կ'ունենայ հայ գրական շարժումն: Եւ այս ծանօթութիւնն իրենց յոյժ շահաւետ պիտ'ըլլայ»: Վերջապէս, ամփոփելով իր տեսակետը Նորայր-Նուպարյան բանավեճի վերաբերյալ, Եղիան իր խոսքը եզրափակում է հետևյալ տողերով. «Ահաւասիկ Նորայր. Ահաւասիկ Նուպար: Առաջինն *հետեւած է* Լիդոնէի. բայց անգամ մ'ալ կ'ըսեմ՝ միայն Նուպար կարօղ է հասկնալ Լիդոնէն» (Ե դ, 1886, էջ 363-366):

Մեկ ամիս անց, սակայն, Ե. Տեմիրճիպաշյանը ստիպված էր պատասխանել ոմանց՝ իր հայացքների թյուրըմբռնման կապակցությամբ: Մասնավորապէս, ցավում էր, որ նույն Մեսրոպ Նուպարյանը «Արեւելք»-ում գրել էր, թէ Եղիան «բառագիրք յօրինելու կատարելապէս անկարօղ» է ճանաչում Ն. Բյուզանդացուն, իսկ Հրագդանը (Արփիար Արփիարյան) իր «Օրուան կեանք»-երից մեկում «չափազանց օռիժինալիդէ» էր հայտնել՝ գրելով, թէ «գրագիտաց ներելի չէ դատել կամ գրադատել բառագիրներ ու բառագիրքներ»: Եղիան պարզապէս զարմացած էր՝ «Ուրեմն ի՞նչ ներելի է գրագիտաց», ակնհայտ հեգնությամբ հարցնում է նաև ինքն էլ պատասխանում՝ «*Արեւելք* ծախէ...» (Ե ե, 1886, էջ 483):

Այդ օրերին է, որ հրատարակիչ Գարեգին Պաղտատյանը խնդրում է Եղիա Տեմիրճիպաշյանին «պատրաստել համառօտ բառագիրք մը ֆռանսերէն լեզուի»: Համաձայնելով այդ առաջարկին՝ Եղիան իր պարտքն է համարում մի քանի պարզաբանում անել խնդրի վերաբերյալ: Նախ՝ նա նշում է, որ չնայած «դասագրոց կամ դասագրքի նման երկերի ստեղծումն իր համար «հեշտ ու համակրելի գործ մը» չէ, այդուհանդերձ, չի մերժել «ստանձնել սոյն աշխատութիւնն», հիշելով, թէ իր սերունդը ինչ դժվարու-

¹ Գվիդոն Լուսինյանը (Ամբրոսիոս Գալֆաեան, 1826-1906) իր 120 հազար բառ պարունակող «Նոր բառգիրք պատկերագարդ ֆռանսահայ» երկհատոր բառարանը լույս է ընծայել տարիներ անց 1900 թ., Փարիզում:

թյուններ ու չարչարանքներ էր կրել ուսանող եղած ժամանակ՝ ձեռք բերելու համար Էմիլյան բառարանը, որը, սակայն, «ամենայարմար չէր» և որի գործածությունը նույնիսկ «տանջալի էր» իրենց համար: Նոր սերունդը, անշուշտ, ավելի «բարեբաստիկ» վիճակում էր, քանզի ստեղծվել էին «բազում դասատետրեր», որոնք շատ թե քիչ նպաստում էին ֆրանսերենի ուսուցման գործը դյուրացնելուն: Սակայն դեռևս ոչ ոք չէր նախաձեռնել ստեղծել մի բառագիրք՝ նախակրթարանների ուսանողության կամ վարժարաններից դուրս գտնվող և «մասնաւոր դասառութեամբ» ֆրանսերեն սովորողների համար: Ահա թե ինչու, «դոցա մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէր այն անձն,- համոզված էր Եղիան,- որ հրատարակէր բառագիրք մը *դիւրաբար ու դիւրագին*՝ ուր ուսանողք գտնէին լեզուին բոլոր գործածական բառերն եւ անոնց ամենէն գործածական նշանակութիւններն...» (ընդգծումները. – Պ. Դ., /Ե գ, 1886, էջ 285):

Այնուհետև նա ներկայացնում է նման համառոտ բառարանի ստեղծման իր սկզբունքները: Նշելով, մասնավորապես, որ մինչ այդ հրատարակված ֆրանսահայ բառարաններում չկան «ֆրանսերեն լեզուին բնիկ կամ եկամուտ» բազում հատուկ անունների հայերեն ճշգրիտ տառադարձությունները, ինչը, անշուշտ, շփոթությունների տեղիք է տալիս, նա ասում է, թե աշխատել է լրացնել այդ բացը կամ թերին: Ավելի ուշ պիտի գրեր, թե այդ բառարանում «շատ բառեր շինած եմ հայերէն՝ յաջող կամ ձախօղ. թող դատէ ժողովուրդն» (Տեմիրճիպաշեան ա, 1888, էջ 27): Ուստի իր բառարանին կցել է նաև «պատմական, աշխարհագրական ու դիցաբանական» անունների մի բառագրքույկ: Ապա հավաստելով, որ սույն բառագրքի ստեղծմամբ ամեննին չի հավակնում «լեզուագէտի» կոչման, քանզի իր «սովորական եւ յաւետ նախասիրական գործն է» գրականությունը, ապա այդ գրքի վրա իր «համեստ անունն, պիտի երևա «բացառիկ կերպի»: Նաև հույս ուներ, որ իր այդ նախաձեռնությամբ «եւ ո՛չ բառագիրք մը» պիտի հարուցանէր իր դեմ, ուրեմն և չպիտի նորոգվեր «Նորայրի եւ Նուպարի բառական կամ սնափառական վեճն»: Ավելի ուշ՝ իր «Ֆրանսահայ գրպանի բառագիրք»-ի առիթով, Ե. Տեմիրճիպաշեանը դարձյալ նշում էր, թե բառարաններ շատ կան, բայց «չկայ միակ բառագիրք մը գաղափարաց ու գիտութեանց»: Իր «*Փիլիսոփայական բառարանի* նախափորձն» ևս, ըստ նրա, «աւելի ցուցատետրակ մ'է քան կանոնաւոր բառագիրք մ'իմաստասիրական գիտութեանց»: Նա ընդգծում է, որ ներկա «Իմաստասիրական բառարանը», որ սկսում է տպագրել «Շարժում»-ի մեջ, նույնպես «գրական գործ մը, հեղինակութիւն մը չէ իր համա», թեև «ամենամեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէ Հայ ազգի մտաւոր զարգացման մեծագոյն գործին»: Դրանում համոզված է, քանի որ «Բառարանին բուն հեղինակներն են» համաշխարհային անուն ունեցող յոթ տասնյակից ավելի իմաստասերներ ու գիտնականներ: Իր խոստովանությամբ, հետևելով եվրոպական բառարանագիրներին, հիշատակում է այն

հսկաների անունները, ինչպես «Բեդալայոձձի, Բոուտոն, Լիդոն, Հառոման, Սրենսեր, Հեքել, Ռընան, Տարուին, Շոբէնհատուեր, Պըբլ, Ֆլամատիոն, Ֆոյերպախ, Պիլսներ, Պոբ...»: Ընդ որում՝ նշում է, որ ուսումնասիրել է երեք հեղինակների՝ Լիդոնի, Սպենսերի և Բյուհների, բոլոր գործերը, նույնքան հատվածներ թարգմանել դրանցից, սկսել է նաև «համառօտել» Ն. Սպենսերի «Կենսաբանություն»-ը՝ «հիմն *Ընկերաբանություն*», խոստանալով հրատարակել, երբ ժամանակ ունենա «աւարտելու զայն»: Այս ամենից հետո, թերևս, տարօրինակ է հնչում այն իրողությունը, որ բացառիկ համեստությամբ Եղիան նույնիսկ ներում է խնդրում «ազգիս գիտուններին»՝ նման բառարան ստեղծելու «յանդգնություն» համար, նշելով, թե «Ըղձալի էր որ աւելի կարօղ անձինք կատարէին այս գործս», քանզի ինքն իրեն «երբէք կատարեալ իմաստասէր մը» չի համարում, միշտ իրեն ճանաչում է սույն «յետինն Հայ իմաստասիրաց» և սույն գործի մեջ միայն «տրուպ աշխատակիցը կամ թարգմանիչը եղած պիտ'ըլլամ» վերը նշված հեղինակների, թեև, խոստովանում էր նաև, որ «կանուխէն իմաստասիրական ուսումները սիրելուս, գրական ասպարիզին մէջ արուեստի գտնուելուս, եւ շատ գրելու հարկին մէջ ըլլալուս համար, առ մեզ Իմաստասիրութեան գլխաւոր ներկայացուցիչն եղայ...» (նույն տեղում, էջ 27-28): Այնուհետև ծանոթագրում է, թե «Պիտի ջանամ հայթայթել ուրիշ մեծամեծ հեղինակներ ալ, զորս պարտ էի կարդացած ըլլալ»: Սակայն դա այնքան էլ դյուրին չէ, խոստովանում է նա, քանզի «քսան տարուան մէջ կարօղ եղած եմ հետզհետէ գնել ունեցած գրքերս»: Եվ քանի որ, այնուամենայնիվ, մի պատկառելի գրադարան էր կազմվել, նա հայտարարում է, թե «գրքատունս յետ մահուան պիտի թողում Ազգային Մատենադարանին», որը, հույս ունենալով, «ի մօտոյ վերակազմուած տեսնել»:

Այդ ամենը, իհարկէ, չէր նշանակում, թե «դիւրին բան է լաւ դասագրքի մը յօրինումն» և ոչ էլ, թե «անխնամ գործ մը պիտի լինի» իր բառարանը: Ընդհակառակը, Եղիան խոստանում է, որ «ի սէր մանկավարժութեան եւ ի գոհացումն խստապահանջ Հրատարակչիս որքան խղճիս», պիտի խնամի այն ավելի, քան իր գրական հրատարակությունները: Որովհետև համոզված էր, թե «Հայ անհատի մը համար մեծագոյն փառքն է նպաստել ծաւալման ա՛յն լեզուին, որ կը բանայ մեզ հին գրականութեանց գանձարանն եւ նոր քաղաքակրթութեան ճանապարհն» (Ե գ, 1886, էջ 286-287):

Եզրակացություն

Արևմտահայ գրական կյանքում հին ու նոր գրական լեզուների՝ գրաբարի և աշխարհաբարի, շուրջ ծավալված բուռն բանավեճում Եղիա Տեմիրճիպաշյանը հետևողականորեն պաշտպանում էր ժողովրդին հասկանալի արդի աշխարհաբարի իրավունքները՝ համոզված, որ «աշխարհաբարն *աշխարհ* կը պարունակէ»:

Արդի հայերենի խնդիրը նա դիտարկում էր ազգային կրթության և դաստիարակության բարեփոխումների հետ սերտ առնչակցության մեջ:

Նշված հիմնախնդիրների արդյունավետ լուծման տեսակետից Ե. Տեմիրճիպաշյանը ոչ միայն կարևորում էր տարբեր բնույթի «բառագրքերի», դասագրքերի ստեղծումը, այլև իր որոշակի ներդրումն ունենում այդ գործում:

Այդ ամենը, սակայն, չէր նշանակում դեմ գնալ դասական լեզվին ու արժեքներին: Ե. Տեմիրճիպաշյանը մշտապես հորդորում և կոչ էր անում ամենքին՝ սիրել ու սովորել իրենց մայրենի լեզուն՝ «հին ըլլայ կամ նոր...»:

Գրականության ցանկ

1. *Գրասէր Ստոմ*, Արդի հայերէն, Կ. Պոլիս, Երկրագունտ, 1884, թիւ 2, էջ 75-78:
2. *Տեմիրճիպաշեան Ե* Զարգացումն հայ մտաց և հայ լեզուի, Կ. Պոլիս, Երկրագունտ, 1887, թիւ 11-12, էջ 449-456:
3. *Տեմիրճիպաշեան Ե*, Ճաշակ ոսկեղէն դպրութեան, Կ. Պոլիս, Երկրագունտ, 1886, թիւ 1, էջ 46-47:
4. *Տեմիրճիպաշեան Ե*, Բարեշրջութիւն ընտրողական աշխարհաբարի, Կ. Պոլիս, Երկրագունտ, 1887, թիւ 11-12, էջ 467-469:
5. *Տեմիրճիպաշեան Ե*, Նորայրեան բառարանի սխալները /գրեց Մեսրոպ Նուպարեան/, Կ. Պոլիս, Երկրագունտ, 1886, թիւ 8, էջ 363-366:
6. *Տեմիրճիպաշեան Ե*, Խնդամուլիկ աղջիկը, Կ. Պոլիս, Երկրագունտ, 1886, թիւ 10, էջ 483-485:
7. *Տեմիրճիպաշեան Ե*, Ֆռանսահայ բառագիրք, Կ. Պոլիս, Երկրագունտ, 1886, թիւ 6, էջ 285-287:
8. Մշակ, Հատրնտիր ընթերցուածք ազգային եւ օտար մատենագիրներէ քաղուած: Ընտանեաց եւ դպրոցաց յամար, Կ. Պոլիս, Արամեան տպագր., 1880, 32 էջ:
9. *Տեմիրճիպաշեան Ե.*, Բառագիրք իմաստասիրական, Կ. Պոլիս, Գրական իմաստասիրական շարժում /ԳԻՇ/, 1888, տետր երկրորդ, էջ 27-38:
10. *Տեմիրճիպաշեան Ե.*, Կատուի մը յիշագիրքը, Գրական իմաստասիրական շարժում /ԳԻՇ/, 1885, տետր տասներորդ եւ մետասաներորդ, էջ 188- 193:
11. *Տեմիրճիպաշեան Ե.*, Կատուի մը յիշագիրքը /բառարանք եւ վարժարանք/, Կ. Պոլիս, Գրական իմաստասիրական շարժում /ԳԻՇ/, 1886, տետր տասներորդ եւ մետասաներորդ, էջ 193-197:
12. *Տեմիրճիպաշեան Ե.*, Համառօտ իմաստասիրական քերականութիւն, Կ. Պոլիս, Գրական իմաստասիրական շարժում /ԳԻՇ/, 1885, տետր հինգերորդ, էջ 92-96:
13. *Տեմիրճիպաշեան Ե.*, Երեք պարտաւորիչ լեզուք եւ բառգիրք ֆռանսաթուրք, Կ. Պոլիս, Գրական իմաստասիրական շարժում /ԳԻՇ/, 1883, տետր Ե, էջ 100-103:
14. *Տեմիրճիպաշեան Ե.*, /Գ. Լուսինյանի նամակը Ե. Տ.-ին/, Կ. Պոլիս, Գրական իմաստասիրական շարժում /ԳԻՇ/, 1884, տետր 11 /նոյեմբեր/, էջ 202-203:
15. *Տեմիրճիպաշեան Ե.*, Դամբարան, Նիւ Եորք, Ամերիկահայ գրատուն, 1920, 25 էջ:
16. *Տեմիրճիպաշեան Ե.*, Կրթական խնդիր, Կ. Պոլիս, Երկրագունտ, 1886, թիւ 4, էջ 145-160:

References

1. **Graser Atom**, Ardi hajeren, K. Polis, Erkragunt, 1884, tiv 2, edj 75-78 /in Armenian/.
2. **E, Zargacumn** haj mtac ev haj lezui, K. Polis, Erkragunt, 1887, tiv 11-12, edj 449-456 /in Armenian/.
3. E, chachka wskegen dprutyanyan, K. Polis, Erkragunt, 1886, tiv 1, edj 46-47 /in Armenian/.
4. E, Barechrdjutun yntroxakan achxarabari, K. Polis, Erkragunt, 1887, tiv 11-12, edj 467-469 /in Armenian/.
5. E, Norayryan bararani sxalnery /grec Mesrop Nuparyan/, K. Polis, Erkragunt, 1886, tiv 8, edj 363-366 /in Armenian/.
6. E, Xndamolik axdjiky, K. Polis, Erkragunt, 1886, tiv 10, edj 483-485 /in Armenian/.
7. E, Fransahay baragirq, K. Polis, Erkragunt, 1886, tiv 6, edj 285-287 /in Armenian/.
8. **Mchak**, Hatyntir yntercvacq azgayin evo tar matenagirner qaxvac. Yntaneac ev dprocac hamar, K. Polis, Aramyan tpage, 1880, 32 edj /in Armenian/.
9. **Temirchipachyan E.**, Baragirq imastirakan, K. Polis, Grakan ev imastirakan charjum /GICH/, 1888, tetr erkrord, edj 27-38 /in Armenian/.
10. **Temirchipachyan E.**, Katui my hichagirqy, K. Polis, Grakan ev imastirakan charjum /GICH/, 1885, tetr tasnerord ev metasanerord, edj 188-193 /in Armenian/.
11. **Temirchipachyan E.**, Katui my hichagirqy /bararanq ev varjaranq/, K. Polis, Grakan ev imastirakan charjum /GICH/, 1886, tetr tasnerord ev metasanerord, edj 193-197 /in Armenian/.
12. **Temirchipachyan E.**, Hamarot imastirakan qerakanutun, K. Polis, Grakan ev imastirakan charjum /GICH/, 1885, tetr hingerord, edj 92-96 /in Armenian/.
13. **Temirchipachyan E.**, Ereq partavorich lezuq ev bargirq fransaturq, K. Polis, Grakan ev imastirakan charjum /GICH/, 1883, tetr E, edj 100-103 /in Armenian/.
14. **Temirchipachyan E.**, /G. Lusinyani namaky E. T.-in/, K. Polis, Grakan ev imastirakan charjum /GICH/, 1884, tetr 11 /noyember/, edj 202-203 /in Armenian/.
15. **Temirchipachyan E.**, Dambaran, Niu Eorq, Amerikahay gratun, 1920, 25 edj /in Armenian/.
16. **Temirchipachyan E.**, Krtakan xndir, K. Polis, Erkragunt, 1886, tiv 4, edj 145-160 /in Armenian/.

Պետրոս Դեմիրճյան – բ.գ.դ., Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության, բազմաթիվ գրականագիտական և գրաքննա-դատական հոդվածների:

Orcid. ID 0009-0003-6265-4421
pdemirchyan@mail.ru

Петрос Демирчян – д. филол. н., секретарь правления Союза писателей Армении, старший научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегиана НАН РА. Научные интересы: классическая и современная литература. Автор 3-х монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей.

Orcid. ID 0009-0003-6265-4421
pdemirchyan@mail.ru

Petros Demirchyan – Doctor of Philological Sciences. Executive Secretary at Writers' Union of Armenia, Senior Researcher at the Department of Modern Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghian. Scientific interests: classical and modern literature. Author of 3 monographs, numerous literary, literary-critical articles. pdemirchyan@mail.ru

Orcid. ID 0009-0003-6265-4421
pdemirchyan@mail.ru

Ընդունվել է տպագրության 17.10.2023թ.: